



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

VARUZHAN MURADYAN

CUSTOMS ISSUES REGULATIONS IN RA

Key words: customs tariff, customs duty, customs tariff regulations, customs policy

In this article were discussed and discovered the main issue of RA customs tariffs, when RA became a member of EEU (Eurasian Economic Union). Were discussed RA EEU customs duty expected increase for imports from 3rd countries (non of EEU member) and population economic aggravation issues. Were suggested exact solution for particular problem.

ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, ՀՊՏՀ

ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ասպիրանտ, ՀՊՏՀ

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԿԱՅՈՒՆԱՑՆՈՂ ՊԵՏՔՅՈՒՋԵԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հիմնաբառեր. պետական պարտք, բյուջեի առաջնային հաշվեկշիռ, պարտքի կայունություն, իրական աճ, իրական տոկոսադրույք

Վերջին ֆինանսադրամային ճգնաժամն էլ ավելի խորացրեց երկրների պարտքային խնդիրները, և ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ երկրների մեծամասնությունում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասավ աննախադեպ մակարդակի: Հերձգնաժամային ներկա փուլում, երբ ամբողջ աշխարհում վերականգնվում են աճի տեմպերը, ինչպես տեսնում ենք, երկրների մեծ մասը ծախողում է պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության կրճատման ուղղությամբ վարվող քաղաքականությունը:

Պետական պարտքի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն, որպես երկրի ամենախոշոր պարտքային պորտֆել, լուրջ ազդեցություն է թողնում ինչպես մակրոտնտեսական իրավիճակի, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների վրա: Պարտքի խելամիտ կառավարումը կարևոր դեր է խաղում պետական հատվածի ֆինանսների կառավարման գործում: Այն պահանջում է պարտքի կառավարման գործուն համակարգի կիրառում, որը անբարենպաստ պայմաններում կարող է նվազեցնել բացասական ազդեցությունները և մեղմել հավանական ռիսկերը:

Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամն էլ ավելի խորացրեց երկրների պարտքային խնդիրները, և ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ երկրների մեծամասնությունում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասավ աննախադեպ մակարդակի: Իսկ ներկայիս հետճգնաժամային փուլում, երբ ամբողջ աշխարհում վերականգնվում է աճի տեմպերը, ինչպես տեսնում ենք, երկրների մեծ մասը ձախողում է պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության կրճատման ուղղությամբ վարվող քաղաքականությունը: Այստեղ հիմնական գաղափարն այն է, որ կառավարությունը պետք է վարի հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն, որը, տնտեսության անկման և լճացման փուլերում պետք է լինի խթանող (ինչի արդյունքում պետական պարտքն աճում է), իսկ մյուս փուլերում՝ զսպող (ինչի արդյունքում էլ պետք է մարվի նախկին պարտքը կամ դրա գոնե որոշ մասը)¹: Սակայն, երկրների մեծ մասում հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում հաջողում է տնտեսության անկման ժամանակ: Արդյունքում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն աճում է նույնիսկ տնտեսության աճի փուլում (Հայաստանը միգուցե և ասվածի ցայտուն օրինակը չէ, որովհետև, օրինակ, 2000-ականներին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը էականորեն նվազեց, իսկ նախորդ երկու տարվա աճը առավելապես պայմանավորված է արտաքին անբարենպաստ շուկերի կլանման անհրաժեշտությամբ), և ամեն հաջորդ հնարավոր տնտեսական ճգնաժամի պարագայում կառավարությունը կունենա շատ ավելի փոքր ֆիսկալ տարածություն (fiscal space) ճգնաժամի հաջող կառավարման համար: Այլ կերպ ասած, եթե, օրինակ, Հայաստանում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2008 թ. վերջին մոտ 15% էր, կառավարությունն ուներ բավական մեծ ազատություն պարտք ներգրավելու և ճգնաժամը կլանելու համար, իսկ այժմ, երբ պետական պարտքը մոտ է սահմանային՝ 60% ցուցանիշին, բնականաբար, հաջորդ մեծածավալ շուկի պարագայում կառավարության ազատությունը պարտք ներգրավելու առումով էականորեն սահմանափակված կլինի: Այսպիսով՝ ներկայումս անհրաժեշտ է բավական մեծ ուշադրություն դարձնել պարտքի կայունության հիմնախնդիրներին:

Պարտքի կայունության բազմաթիվ սահմանումներ կան, որոնք կարելի է խմբավորել, օրինակ, ըստ բնույթի՝ ակադեմիական կամ պրակտիկ: Ներկայացնենք պարտքի կայունության՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից տրվող բնորոշումը, ինչն ըստ մեզ բավական ընդհանրական է և պարունակում է ինչպես ակադեմիական, այնպես էլ պրակտիկ տարրեր: Այսպես, ըստ ԱՄՀ բնորոշման, պետական պարտքը կայուն է, եթե կառավարությունն ընթացիկ տնտեսական քաղաքականությունների պարագայում կարող է և ի վիճակի կլինի սպասարկել իր պարտքն առանց.

1. քաղաքական կամ տնտեսական շատ մեծ (անհրատեսական) ճշգրտումների անհրաժեշտության կամ
2. բանակցելու պարտատերերի հետ պարտքի վերակառուցման կամ պայմանների փոփոխման համար կամ

¹ Այստեղ խոսքը տնտեսական պարբերաշրջանով ճշգրտված առաջնային հաշվեկշռի (Cyclically adjusted primary balance - CAPB) մասին է, որը պետք է լինի ՀՆԱ ճեղքի հակառակ ուղղությամբ:

3. դեֆոլտ հայտարարելու:

Ընդհանուր առմամբ, երբ խոսքը պարտքի կայունության մասին է, անհրաժեշտ է անդրադառնալ նաև վճարունակության, իրացվելիության և խոցելիության կատեգորիաներին: Սակայն, վերացարկվելով վերոնշյալ կատեգորիաներից և պարտքի կայունությունը դիտարկելով որպես այնպիսի մի իրավիճակ, երբ դրա պաշարի աճը չի գերազանցում համախառն արդյունքի իրական աճի տեմպը, փորձենք ներկայացնել պետական պարտքի կուտակման դինամիկան «փակ տնտեսությունների» համար¹, ինչպես նաև հաշվարկել պետբյուջեի առաջնային հաշվեկշռի այն մակարդակը, որն անհրաժեշտ է պետական պարտքի կայունացման համար:

Ի տարբերություն բաց տնտեսության, փակ տնտեսությունում պետական պարտքը միայն ներքին է (այսինքն՝ ազգային արժույթով), և, բնականաբար, չկան փոխարժեքի տատանման ռիսկեր: Այստեղ բյուջեի սահմանափակության բանաձևը հետևյալն է.

$$G_t + i_t * D_{t-1} = T_t + (D_t - D_{t-1}), \quad (1)$$

որտեղ՝ G_t -ն պետական ծախսերն են առանց տոկոսավճարների, D_{t-1} -ը և D_t -ն, համապատասխանաբար, նախորդ և ներկա ժամանակահատվածների պարտքի պաշարը, i_t -ն համախառն պարտքի միջին կշռված եկամտաբերությունը, իսկ T_t -ն հարկային եկամուտները: Այսպիսով՝ (1) հավասարման ձախ մասում կառավարության ընդհանուր ծախսերն են, իսկ աջ մասում՝ եկամուտները և պարտքի պաշարի փոփոխությունը: Երբ նշված հավասարման ձախ մասը գերազանցում է հարկային եկամուտները, բյուջեն դեֆիցիտային է, այսինքն՝ պարտքի պաշարն աճում է, իսկ երբ հարկային եկամուտները գերազանցում են ամբողջական ծախսերը, պարտք է մարվում:

Կատարելով որոշ ձևափոխություններ՝ կստանանք.

$$\begin{aligned} (G_t - T_t) + (i_t * D_{t-1} + D_{t-1}) &= D_t, \\ D_t &= (i_t * D_{t-1} + D_{t-1}) - (T_t - G_t), \\ D_t &= (1 + i_t) * D_{t-1} - PB_t: \end{aligned} \quad (2)$$

(2) հավասարման մեջ PB_t -ն բյուջեի առաջնային հաշվեկշիռն է (primary balance)² եկամուտների և տոկոսավճարները չներառող պետական ծախսերի տարբերությունը: Այսպիսով՝ երկրորդ հավասարումը ցույց է տալիս դրական կապ պարտքի պաշարի և անվանական տոկոսադրույքի, ինչպես նաև բացասական կապ պարտքի պաշարի և առաջնային հաշվեկշռի միջև:

Երկրորդ հավասարման երկու կողմերը բաժանենք անվանական ՀՆԱ-ի վրա.

$$\frac{D_t}{P_t * Y_t} = \frac{(1 + i_t)}{P_t * Y_t} * D_{t-1} - \frac{PB_t}{P_t * Y_t}: \quad (3)$$

¹ Փակ տնտեսությունում պարտքի կառավարում ասելով նկատի ունենք, որ այն նույնացվում է ներքին պարտքի կառավարման գործընթացի հետ, քանի որ երկու դեպքում էլ կառավարությունը չի կարող ներգրավել միջոցներ արտաքին աղբյուրներից:

Քանի որ անվանական ՀՆԱ-ի աճի աղբյուրը գների աճն է կամ իրական աճը, անվանական ՀՆԱ-ն կարող ենք ներկայացնել նաև որպես նախորդ ժամանակաշրջանի անվանական ՀՆԱ-ի և ինֆլյացիայի ու իրական աճի արդյունք.

$$P_t * Y_t = P_{t-1} * Y_{t-1} * (1 + \pi_t) * (1 + g_t), \quad (4)$$

որտեղ g_t -ն ՀՆԱ իրական աճն է: Տեղադրելով (4) հավասարումը (3)-ի մեջ կստանանք.

$$\frac{D_t}{P_t * Y_t} = \frac{(1 + r_t)}{(1 + \pi_t) * (1 + g_t)} * \frac{D_{t-1}}{P_{t-1} * Y_{t-1}} - \frac{PB_t}{P_t * Y_t}$$

Օգտվելով Ֆիշերի հավասարումից և նշանակելով ցուցանիշների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ փոքրատառերով՝ կստանանք.

$$d_t = \frac{(1 + r_t)}{(1 + g_t)} * d_{t-1} - pb_t, \quad (5)$$

որտեղ r_t -ն պետական պարտքի իրական տոկոսադրույքն է: Նախորդ հավասարման երկու կողմերից հանելով պարտք/ՀՆԱ՝ նախորդ ժամանակահատվածի հարաբերակցությունը (d_{t-1}) և կատարելով որոշակի մաթեմատիկական ձևափոխություններ՝ կստանանք պարտքի շարժման օրենքը (low of motion).

$$\begin{aligned} d_t - d_{t-1} &= \frac{(1 + r_t)}{(1 + g_t)} * d_{t-1} - d_{t-1} - pb_t \\ \Delta d_t &= \left(\frac{(1 + r_t)}{(1 + g_t)} - 1 \right) * d_{t-1} - pb_t \\ \Delta d_t &= \left(\frac{r_t - g_t}{1 + g_t} \right) * d_{t-1} - pb_t \\ \Delta d_t &= \varphi_t * d_{t-1} - pb_t \end{aligned} \quad (6)$$

$$\text{որտեղ } \varphi_t \equiv \frac{r_t - g_t}{1 + g_t} :$$

Այսպիսով՝ (6) հավասարումը ցույց է տալիս պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության փոփոխությունը՝ կախված բյուջեի առաջնային՝ հաշվեկշիռ/ՀՆԱ հարաբերակցությունից և որոշ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշներից (իրական տոկոսադրույք և թողարկման իրական աճ): Եթե մի պահ վերացարկվենք բյուջեի առաջնային հաշվեկշիռից՝ ենթադրելով, որ այն հաշվեկշռված է, ապա հնարավոր է երկու դեպք.

1. $\varphi_t \leq 1 \Leftrightarrow r_t \leq g_t \xrightarrow{\text{հետևաբան}} \text{պարտքի դինամիկան կայուն է, այսինքն՝ պետական պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը նվազում է կամ առնվազն չի աճում կամ}$
2. $\varphi_t > 1 \Leftrightarrow r_t > g_t \xrightarrow{\text{հետևաբան}} \text{պարտքի դինամիկան անկայուն է կամ աճող (explosive):}$

Այժմ կարող ենք փաստել, որ այլ հավասար պայմաններում, պարտքի կայունության ապահովման համար անհրաժեշտ է, որը ՀՆԱ իրական աճը գերազանցի պարտքի միջին կշռված իրական տոկոսադրույքը: Այսինքն՝ նորից գալիս ենք այն եզրակացությանը, որ նպատակահարմար է պետական պարտք ներգրավել միայն արտադրողական (օրինակ՝ ներդրումներ ենթակառուցվածքներում կամ առհասարակ կապի-

տալ ծախսեր), այլ ոչ ընթացիկ ծախսեր կատարելու նպատակով, որոնք էլ կարագացնեն ՀՆԱ իրական աճը և կմեծացնեն կառավարության ինչպես նոր, այնպես էլ նախկինում ստանձնած պարտավորությունների մարման հնարավորությունները:

Հարկ է նշել, որ կառավարության ազդեցությունն արդյունքի իրական աճի և հատկապես իրական տոկոսադրույքի վրա սահմանափակ է (դրանց վրա ազդում են նաև մի շարք էկզոգեն գործոններ), և ստացվում է, որ կառավարությունը պարտքը կայունացնելու համար պետական բյուջեն նախագծելիս պետք է ընտրի, այսպես ասած, «մնացորդային» քաղաքականություն, այսինքն՝ պլանավորի բյուջեի այնպիսի առաջնային հաշվեկշիռ, որը կկայունացնի պետական պարտքը՝ իրական տոկոսադրույքի և իրական աճի կանխատեսվող մակարդակներն ընդունելով որպես տրված մեծություններ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացնենք նաև բյուջեի առաջնային հաշվեկշռի այն մակարդակը, որը հնարավորություն կտա կայունացնելու պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ($\Delta d_t = 0$).

$$pb_t^* = \left(\frac{r_t - g_t}{1 + g_t} \right) * d_{t-1} \quad (7)$$

որտեղ pb_t^* - ն անվանում են պարտք կայունացնող բյուջեի առաջնային հաշվեկշիռ:

Այժմ, կատարված վերլուծության հիման վրա, փորձենք հաշվել ներքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կայունացնող բյուջեի առաջնային հաշվեկշռի մակարդակը մեր տնտեսության համար, ինչը ներկայումս շատ արդիական է, առավել ևս, ինչպես ՀՀ կառավարության 2017–2022 թվականների ծրագրում է նշվում. «Հարկաբյուջեյային քաղաքականության մակրոտնտեսական շրջանակը միջին ժամկետում ուրվագծվելու է պարտքը կայունացնող քաղաքականության համատեքստում, ինչը տնտեսական աճին նպաստող մակրոտնտեսական կայուն միջավայրի կարևորագույն նախապայման է»:¹ Հարկ է նշել, որ վերոնշյալ մոդելը վերաբերում է փակ տնտեսությանը, հետևաբար՝ խոսքը միայն ներքին պետական պարտքի մասին է:

Սկզբում կատարենք որոշ ենթադրություններ, մասնավորապես.

- Կառավարության ներքին պետական պարտքը (չհաշված ռեզիդենտների կողմից ձեռք բերված ՀՀ արտարժույթային պարտատոմսերը) 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 508,33 մլրդ ՀՀ դրամ², իսկ ներքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ մոտ 10% (d_{t-1}):
- Սպասվող գնաճը 2017 թ. համար՝ 4% (π_t)³:
- Անվանական տոկոսադրույքը պարտատոմսերի պորտֆելի միջին կշռված եկամտաբերությունն է, ինչը 2016 թ. վերջի դրությամբ կազմել է 13,15 տոկոս: Մի կողմից՝ հիմք ընդունելով պարտատոմսերի եկամտաբերության վերջին տարիների

¹ ՀՀ կառավարության 2017–2022 թթ. ծրագիր, էջ 52, <http://www.gov.am/files/docs/2207.pdf>

² ՀՀ ՊՊ տարեկան հաշվետվություն 2016, http://minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/

³ Հաշվի չառնելով այն հանգամանքը, որ գնաճը 2016 թ. եղել է բացասական, թիրախին հասնելու ժամանակային հորիզոնը՝ 3 տարի:

նվազման միտումը, խթանող դրամավարկային միջավայրը, ինչպես նաև ֆինանսական համակարգում ավելցուկային իրացվելիությունը, մյուս կողմից՝ այն, որ հետևողականորեն մեծանում է առավել երկարաժամկետ պարտատոմսերի տեսակարար կշիռը ընդհանուր պետական պարտքում, որոնց եկամտաբերությունը ավելի բարձր է, կարող ենք ենթադրել, որ պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը 2017 թ. ավարտին կլինի մոտ նախորդ տարեվերջի ցուցանիշին ($i_t = 13,15\%$):

- Իրական տնտեսական աճը՝ 2017 թ.-ին¹ կկազմի 3,2%:

Այսպիսի ենթադրությունների պայմաններում իրական տոկոսադրույքը՝

$$(r_t = (1 + i_t) / (1 + \pi_t) - 1) 8,8\% \text{ է: } \text{Հետևաբար՝}$$

$$pb_t^* = \left(\frac{8,8\% - 3,2\%}{1 + 3,2\%} \right) * 10\% \approx 0,5\%$$

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ վերոնշյալ ենթադրությունների պարագայում ներքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի կայունացմանն անհրաժեշտ բյուջեի առաջնային հաշվեկշիռը 2017 թ. համար պետք է լինի 0,5 տոկոս (պրոֆիցիտային):

**ТАТУЛ МКРТЧЯН
ВАЗГЕН ПОГОСЯН**

БАЛАНС ПЕРВИЧНОГО БЮДЖЕТА, СТАБИЛИЗИРУЮЩИЙ ВНУТРЕННИЙ ДОЛГ В РА

Ключевые слова: внутренний долг, первичный баланс бюджета, стабилизация долга, реальный рост, реальная ставка

Последний экономический кризис еще больше усугубил проблемы задолженности стран, а соотношение государственного долга/ВВП к большинству стран достигло беспрецедентного уровня. И, поскольку влияние правительств на фундаментальные экономические показатели ограничено, становится все актуальней уделять больше внимания первичному балансу бюджета для стабилизации соотношения долга к ВВП.

**TATUL MKRTCHYAN
VAZGEN POGHOSYAN**

INTERNAL DEBT STABILIZING BUDGET PRIMARY BALANCE FOR THE ECONOMY OF THE RA

Key words: public debt, budget primary balance, debt stabilization, real growth, real interest

¹ 2017 թ. բյուջետային ուղերձ, մաս I-Բ՝ ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, էջ 65, http://minfin.am/hy/page/petakan_byuj/

The recent economic crisis has further aggravated the countries' debt problems and the ratio of the public debt/GDP to most of the countries has reached an unprecedented level. And, as the governments' impact on the fundamental economic indicators is limited it is becoming pressing to put more attention on the budget primary balance to stabilize the debt to GDP ratio.

ԱՐՄԻՆԵ ՍԶԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. ծրագրային բյուջետավորման բարեփոխումներ, ծախսերի արդյունավետություն և արդյունքայնություն, արդյունքների թափանցիկություն, պատասխանատվության ուժեղացում, հանրային ակտիվներ, հաշվետվականություն

Ծրագրային բյուջետավորման ներդրմանը առանցքային տեղ է հատկացվել սկսած 2004 թվականից՝ որպես պետական ծախսերի հիմնավորվածության, արդյունավետության և արդյունքայնության աստիճանի ավելացման առավել խոստումնալից եղանակ: Ծրագրային բյուջետավորման ուղղությունը ճանաչվել է բյուջետային բարեփոխումների գերակա ուղղություն ՀՀ կառավարության ծրագրում: ԾԲ հիմնական սկզբունքներն են մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկությունը, դրանց համար պետական մարմինների պատասխանատվության ուժեղացումը, հանրային ակտիվների և սեփականության կառավարման արդյունքների թափանցիկության և հաշվետվականության մեծացումը:

Ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ ՀՀ-ում փորձնական քայլեր իրականացվել են դեռևս 2000-ական թվականների սկզբներին: Անդրադառնալով միջազգային փորձին՝ նշենք, որ բյուջետային համակարգերի զարգացումն այլ երկրներում ժամանակագրական առումով բաժանվում է հետևյալ փուլերի.

- մուտքերի վրա հիմնված բյուջետավորում (1900-ական թթ.),
- արդյունքների վրա հիմնված բյուջետավորման վաղ փորձեր (1960-ական թթ.),
- զրոյական հիմունքներով բյուջետավորում (1960-1970-ական թթ.),
- նոր պետական կառավարում, այդ թվում՝ արդյունքների վրա հիմնված բյուջետավորում (1980-ական թթ.-ից մինչ այժմ):

Արդյունքների վրա հիմնված բյուջետավորումը արագ տարածում է գտնում ողջ աշխարհում: ՏՀԶԿ երկրների մեծ մասն օգտագործում է արդյունքների վրա հիմնված